

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
№ 51/09

Քաղ. Երևան

23 հունվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ. Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ. Ադամյան, Ա.Վ. Բաբայան և Լ.Ե. Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. հունվարի 23-ի նիստում (արձանագրություն № 67/8) քննարկեց «Նահապետ և Կ» ընկերության ներկայացուցիչ ՀՀ հավատարմատար Է.Նահապետյանի 2008թ. դեկտեմբերի 27-ի բողոքը ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի՝ Anadolu Efes Technical & Management Consultancy N.V.(AN) ընկերության БЕЛЫЙ МЕДВЕДЬ (h.20071062) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին 22.07.2008թ. կրկնական փորձաքննության որոշման դեմ:

2008թ. հուլիսի 22-ի իր որոշմամբ կրկնական փորձաքննությունը՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ կարգ) 15.2-րդ և 93.2-րդ կետերի համաձայն, մերժել է БЕЛЫЙ МЕДВЕДЬ (h.20071062) բառային ապրանքային նշանի գրանցումը հայտարկված ԱԾՄԴ 32-րդ դասի ապրանքների համար, հիմք ընդունելով նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ FRoSTA Aktiengesellschaft (DE) ընկերության IR 643497 միջազգային գրանցմամբ POLAR BEAR շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի առկայությունը:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

Բողոքարկողը համաձայն չէ կրկնական փորձաքննության որոշման հետ, քանի որ չի համարում մերժված БЕЛЫЙ МЕДВЕДЬ և հակադրված POLAR BEAR & device ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման, քանի որ դրանց ընկալումը սպառողի կողմից սկզբունքորեն տարբերվում է համեմատության երեք տեսակետից:

1. Հակադրված POLAR BEAR ապրանքային նշանը հայ սպառողը կընկալի և կթարգմանի իբրև «բելվեռային արջ», իսկ БЕЛЫЙ МЕДВЕДЬ հայտարկված նշանը՝ իբրև «սպիտակ արջ»:

2. Մերժված և հակադրված նշանները տարբերվում են նաև հնչյունաբանական տեսակետից, այսպես, հակադրված POLAR BEAR ապրանքային նշանը կատարված է լատիներեն այբուբենի տառերով և արտասանվում է «փոլըր բերը», իսկ մերժված БЕЛЫЙ МЕДВЕДЬ նշանը գրված է կիրիլիցայի տառերով և արտասանվում է «բելիյ մեդվեդ»:

3. Մերժված և հակադրված նշանները տարբերվում են նաև տեսողական ընկալման տեսակետից: Հակադրված նշանը համակցված նշան է, բաղկացած է պատկերային և բառային մասերից, ընդ որում, պատկերային մասը իրենից ներկայացնում է երեք բրգաձև պատկեր, որոնց ֆոնի վրա կա արջի պատկեր, որի տակ զետեղված է POLAR BEAR գրառումը: Հակադրված նշանին նայելիս՝ սպառողը նախ և առաջ կընկալի պատկերային մասը, այնուհետև՝ բառայինը:

Բողոքարկողը կարևոր է համարում նաև շեշտել մերժված և հակադրված նշանների օգտագործման առանձնահատկությունները, մասնավորապես այն հանգամանքը, որ այդ ընկերությունների ապրանքի պիտակի և տուփերի վրա ապրանքային նշանի հետ մեկտեղ զետեղվում է նաև արտադրող ընկերության անվանումը, ինչը զգալիորեն նվազեցնում է սպառողի կողմից նշանները շփոթելու հավանականությունը:

Միաժամանակ բողոքարկողը նշում է, որ «Նահապետ և Կ» ընկերության կողմից կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ FROSTA Aktiengesellschaft (DE) ընկերության IR 643497 միջազգային գրանցմամբ POLAR BEAR ապրանքային նշանը չի օգտագործվել և չի օգտագործվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱՕՄԴ 32-րդ դասի ապրանքների համար:

Ուստի և «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, բողոքարկողի կողմից 16.08.2008թ. բողոքարկման խորհուրդ դիմում էր ներկայացվել՝ հակադրված ապրանքային նշանի գրանցման գործողությունը դրա չօգտագործման պատճառով ԱՕՄԴ 32-րդ դասի ապրանքների նկատմամբ վաղաժամկետ դադարեցնելու պահանջով, որը բողոքարկման Խորհրդի 2008թ. դեկտեմբերի 8-ի համապատասխան որոշմամբ բավարարվեց:

Այսպիսով, բողոքարկողը համարում է, որ վերացել են БЕЛЫЙ МЕДВЕДЬ (h.20071062) ապրանքային նշանի գրանցումն մերժելու հիմքերը և, ելնելով դրանից, խնդրում է վերանայել կրկնական փորձաքննության որոշումը և նշված ապրանքային նշանը գրանցել Հայաստանում հայտարկված բոլոր ապրանքների համար:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Բողոքարկման խորհուրդը համարում է, որ БЕЛЫЙ МЕДВЕДЬ (h.20071062) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության 2008թ. հուլիսի 22-ի որոշումը օրինաչափ էր, սակայն հաշվի առնելով նոր ի հայտ եկած հանգամանքները, այն է՝ 2008թ. դեկտեմբերի 8-ի բողոքարկման խորհրդի դ 39/08 որոշման համաձայն հակադրված POLAR BEAR (IR 643497) ապրանքային նշանի գրանցման գործողությունը ԱՕՄԴ 32-րդ դասի ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու փաստը, բողոքարկման խորհուրդը գտնում է, որ վերացել են БЕЛЫЙ МЕДВЕДЬ (h.20071062) ապրանքային նշանի գրանցումն մերժելու հիմքերը:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 68-րդ կետի «ա» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Նահապետ և Կ» ընկերության բողոքը ամբողջովին, չեղյալ ճանաչել БЕЛЫЙ МЕДВЕДЬ (h.20071062) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին 2008թ. հուլիսի 22-ի կրկնական փորձաքննության որոշումը և БЕЛЫЙ МЕДВЕДЬ (h.20071062) ապրանքային նշանը գրանցել Հայաստանում նաև ԱՕՄԴ 32-րդ դասի հայտարկված ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի

նախագահ

Ա.Ազիզյան